

Armenian Apostolic Church of Cleveland

666 Richmond Road Richmond Heights 24, Ohio • EVergreen 1-6590

29 Յունուար, 1962

Գերաշնորհ
Տ. Մինն Արք. Մանուկեան, Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Արքեպիսկոպոս Հայր,

Երեք շաբաթ առաջ ստացայ Պր. Յակոբ Նազըրեանի երկտողը, որով
կը մերժէիք վճարել դպրոցական առաջին մասնավճարս: Կը ցաւիմ որ սխալ
հասկացողութիւն մը եղած է այս խնդրին մէջ եւ Ձեր ներողամտութիւնը
կը խնդրեմ:

Կը փափաքիմ Ձեր Արքեպիսկոպոսեան նկատառութեան յանձնել սա պարագան
որ երբ Ձեզի հետ կը խօսէի անցեալ տարուայ Օգոստոսին դպրոցական խնդրիս
եւ ծախքերուս մասին, թելադրեցիք որ, ինչպէս անցեալին, այս տարի եւս
դպրոցը փոխգիր մը ղրկէ Առաջնորդարան. որով, անցեալ Մեպտեմբերին երբ
դպրոց արձանագրուեցայ, յանձնարարեցի Համալսարանի գանձապահին որ փոխ-
գիրը ղրկէ Առաջնորդարան: Աւելին, անցեալ Նոյեմբերին Տթթ. Կօէքճեան
ինծի իմացուց որ Ձեր Արքեպիսկոպոսեան խնդրանքին ընդառաջելով դպրոցական
տարեվճարս ղրկած է: Սոյն կէտերուն վրայ յենլով խորհեցայ որ այդ փոխ-
գիրը արդէն իսկ վճարուած է: Բայց երբ քննութիւններէն շաբաթ մը առաջ
ստացայ զայն, Պր. Նազըրեանին ղրկեցի այդ մտածողութեամբ որ մոռացու-
թիւն մը եղած է: Աւրախ եմ ըսելու որ Գլխավէնտի Ծխական Խորհուրդը բարի
գտնուեցաւ վճարելու 347.90 տոլարի գումարը եւ կրցայ քննութեանց մաս-
նակցիլ ու յաջողութեամբ դուրս գալ: Ծնորհակալ կ'ըլլամ եթէ Ձեր Արքեպ-
իսկոպոսեան բարի ըլլայ հաստատելու այս գումարին վճարումը եւ ղրկելու Ծխա-
կան Խորհուրդիս: Երկրորդ երամսեակին համար որոշած եմ միայն երկու դասի
հետեւիլ աւելի ժամանակ կարենալ տալու համար հետզհետէ աւելցող ծխական
գործերուն եւ կարիքներուն: Կրնամ երկրորդ երամսեակի փոխգիրը ղրկել
Առաջնորդարան:

Ներկայիս, Ս. Մնունդի առթիւ ծխականներու տուները կ'այցելեմ աւելի
մօտէն ծանօթանալու բոլորին: Ետ ուրախ եմ ըսելու որ եկեղեցւոյ շինութեան
գործը շատ արագ կերպով կ'ընթանայ: Արդէն իսկ հաւաքած ենք 30.000
տոլար եւ կը յուսանք հոգը փորելու աշխատանքներուն սկսիլ Մարտի 4-ին:
Այս առթիւ, նկատելով որ Տ. Առնակ ԲՏՆՅ. Գասպարեանը արդէն իսկ մեկնած
պիտի ըլլայ իր նոր պաշտօնատեղին, կը փափաքիմ որ կարգադրութիւն ընէք
Մարտ 4-ի կիրակիին, ինչպէս նաեւ յաջորդող ամիսներուն համար, եկեղեցւոյ
կանի մը ներկայութեան մեր մէջ կատարելու Ս. Պատարագ եւ տալու հոգեւոր
մխիթարութիւն:

Այսօր ստացայ Ձեր Արքեպիսկոպոսեան ինծի նուէր ղրկած գիրքը, որուն
համար հաճեցէք ընդունիլ խորին շնորհակալութիւններս:

Մաղթելով Ձեր գործերուն յաջողութիւն, մնամ ի համբոյր Ձեր Ս. Աջոյն,

Որդիական յարգանք
Ներսէս Արք. Ճէպճեան

Handwritten notes in Armenian script, possibly a signature or reference.

Քիւ 3471
Փետրուար 1, 1962

Բարեշնորհ
Ներսէս Սրկ. ձեպէհեան
Հոգեւոր Մասակարար
Գլխավէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքի

Սիրելի Ներսէս Արքեպիսկոպոս,

Առաջնորդ Արքեպիսկոպոս Հայրը ստացած է Յունուար 29 թուակիր Ձեր
Կամակերպութիւնը որ եկեղեցւոյ շինութեան հանգանակութիւնը թափով
4 րոնթանայ եւ արդէն 30.000 տուարի խոստում պահանջած էր եւ կը
ծրագրէր հոգի օրհնութիւնը կատարելով շուտով շինութեան սկիզբը:

Հրահանգուած ենք հաղորդելու Ձեր սիրելիութեան թէ Նորին
Արքեպիսկոպոս կարգադրութեամբ, Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ
Տ. Միւսեան Ս. Հրդ. Կրօնական Մարտի 11ին պիտի այցելէ Ձեր Համայն-
քը եւ Ս. Գաաթազի ճատուցմամբ ճիշդաբար հաւասարեալ ժողովուրդը
ու կատարէ հոգի օրհնութիւնը:

Մաղթելով Ձեզի եւ պատուարժան Միակեան Խորհուրդին լաւա-
գոյն յաջողութիւններ:

Մեզ խորին յարգանքով

Սուրբ Մանուէլեան
Դիւանապետ

Armenian Apostolic Church of Cleveland

666 Richmond Road Richmond Heights 24, Ohio • EVergreen 1-6590

Ապրիլ 8, 1963

Գերաշնորհ
Տ. Միոն Արք. Մանուկեան, Առաջնորդ
Առաջնորդարան, Հայոց Ամերիկայի
նիւ Եորթ


Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ծխական Խորհուրդս, իր վերջին նիստին, որոշեց
պատարագ ունենալ Մայիսի 5-ին, եւ միեւնոյն ժամանակ
պատշաճ կերպով տօնել Ապրիլեան նահատակաց Օրը,
Յիշատակահանգէսով մը, պատարագէն վերջ:


Կը փափաքինք եկեղեցական մը ունենալ այդ շաբա-
թավերջին համար, որպէսզի Ս. Պատարագով հոգեւորապէս
մխիթարէ մեր Գլխվկէնտի Համայնքը եւ միեւնոյն ատեն
խօսի մեզի, իբրեւ բանախօս, Ապրիլեան նահատակաց Տօնին
առիթով:

Մնամ յարգանօք, մատչելով ի համբոյր ձեր Ս. աջոյն,

որդիական սիրով,



Ներսէս Արկ. ձեպէճեան



Քիւ 6077
Ապրիլ 16, 1968

Բարեջնորհ
Ներսէս Սրբ. ձեպէնեան
Հոգեւոր Մասակարար Գլխակէնտի Համայնքին

Միրելի Տիրացու Ներսէս,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Ձեր Ապրիլ 8 թուակիր
նամակը, որով փափագ կը յայտնէք որ եկեղեցական վը այցելէ Ձեր
Համայնքին Մայիս 5ին:

Յանձնարարուած ենք Ձեզի Հաղորդել թէ՛ եղած կարգադրու-
թեան Համաձայն, Առաջնորդական Փոխանորդ Տ.Միւռոն Մ.Վրդ.Կրճիկ-
եան Մայիս 5ին պիտի այցելէ Ձեր Համայնքին եւ պիտի պատարագ մա-
տուցանէ այն օր ու յաւարտ արարողութեան նախագահէ Ապրիլեան Նա-
հատակաց նուիրուած յիշատակահանգէրին:

Մնամ սիրով եւ յարգանքով

Սուրբ Սանուէլեան
Դիւանապետ

Մարտ 20, 1964

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Մ. Վրդ. Գրպրբուիան
Հոգեւոր Հովիւ Գլխավորնոր Հայոց

Սիրելի Հայր Սուրբ.

Ստացանք Ձեր Մարտ 17 թուակիր նամակը: Կը ցաւինք որ Գլխավորնոր եւ
էյրորնի փոքրիկ Հայ դպրոցները գոյութենէ դադրած են այս շրջանին,
սակայն, ուրախ ենք որ Միական Խորհուրդը որոշած է յառաջիկայ շրջանին
զանոնք վերաբանալու աշխատանք տանիլ:

Ձեր եկեղեցիի թերթիկին մէջ քանիցս կարգացինք Ատենապետ Տօքթ. Կէօքնեանի
կոչը՝ ուր կը յայտարարուէր թէ Միական Խորհուրդը պատրաստ էր նոյնիսկ
Հայթայթելու փոխադրութեան միջոց:

Հայ դպրոցի գործը թերեւս ամենադժուարը եղած է այս թեմին մէջ, սակայն
փորձը ցոյց տուած է որ Հաւատաւորներուն յամառ շանքերը միշտ ալ արդիւ-
ւետ եղած են, թէկուզ՝ փոքր չափով, եւ սկզբնական շրջանին աննշան:
Կարեւորը, ձեռք բերուած արդիւնքներուն իրատեսի աչքերով նայիլն է,
տիրող պաշտաններուն ընծայած կարելիութիւններուն լոյսին տակ:

Ամերիկայի մէջ ամէն տեղ փոքրէն սկսած են Հայ դպրոցները, սակայն,
անոնցմէ շատերը շօշափելի յաշոդութիւններ ապահոված են ժամանակի
ընթացքին, թէ՛ աշակերտներու թիւի աստիճանաբար յաւելումի տեսակետով,
եւ թէ այլապէս:

Այդ յաշոդութիւնները մենք կը պարտինք նախ՝ Հոգեւոր Հովիւներուն՝
որպէս նախաձեռնարկի եւ ղեկավարի, յետոյ՝ ուժեղ Հայկական ոգի ունեցող
մայրերու եւ իրենց քաջալեր Հանդիսացող դպրոցատէր ազգայիններուն:
Առաջինը ունինք Ձեր Համայնքին մէջ, նախնին Ձեզի՝ նոյնքան նախանձա-
խնդիր ծխական խորհուրդի մը կողքին, եւ վստահ ենք որ Ձեզի Համար
դժուար պիտի չըլլայ մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր գտնել նաեւ Ձեր գոր-
ծակիցները, նախընտրաբար բաղկացած՝ երիտասարդ մայրերէ, եւ Ձեր նոր
եկեղեցիի կողքին ունենալ նաեւ Հայ դպրոցը, դարերէ իվեր մէկը միւսէն
անբաժան:

Ձեր եկեղեցիի օծման առթիւ Ձեր գեղեցին հրաւերին Համար անգամ մը եւս
Ձեզի յայտնելով խորին շնորհակալութիւններս, կը ցաւիմ ըսելու որ պիտի
չկարողանամ ներկայ ըլլալ:

Կը մաղթեմ Ձեզի՝ եւ Ձեր ժրջան Միական Խորհուրդին նորանոր յաշոդու-
թիւններ:

Մնամք յարգանքօք՝
ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏԻՔԵԱՆ
Կրթ. Տեսուչ

Armenian Church of Cleveland

666 Richmond Road ★ Cleveland, Ohio 44124 ★ 381-6590

17 Մարտ, 1964

Մեծայարգ Տիար
Արտաշէս Մկրտիչեան,
Կրթ. Տեսուչ Հայ Վարժարաններու յԱմերիկա,
Նիւ-Եօրք:


Յարգելի Պր. Մկրտիչեան,

Ստացած եմ ձեր 10 մարտ թուակիր նամակը ուր ծանօթութիւն կուզէիք այս շրջանի հայ դպրոցներու մասին: Դժբախտաբար հոս կամ էքրըն հայ դպրոց բանալու կարելիութիւնը չէ եղած այս տարի: Մօտ ամիս մը առաջ Ծիսական Խորհուրդը նկատի առաւ այս հարցը եւ որոշեց յաջորդ տարեշրջանին սկսիլ հայերէնի դասաւանդութիւնները եթէ մասնաւոր դժուարութեանց չհանդիպին:

Անշուշտ մեր եկեղեցիին օժման առթիւ եղած հրաւերը կը մնայ ի գորու եւ կուզենք իմանալ թէ պիտի հաճիք ներկայ գտնուիլ կամ ոչ:

Զայս տեղեկացնելով Ձերդ սիրելիութեան կը մնամ

Աղօթարար



Վազգէն Մ. Վրդ. Գրպրըսլեան
Հոգեւոր հովիւ Գլխվկենտի հայոց.

Armenian Church of Cleveland

666 Richmond Road * Cleveland, Ohio 44124 * 381-6590

Մարտ 14, 1964

Գերաշնորհ
Տ. Սիոնի Ս. Արք. Մանուկեան,
Բարեջան Առաջնորդ Ամերիկայի եւ Գանատայի Հայոց,
Նիւ-Եօրք:

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մայամիէն գրած ձեր նամակը ստացած եմ շնորհակալութեամբ: Ձեր թելադրութեան համաձայն կ'աշխատինք առժամեայ նկար մը կարգադրել աւագ խորանի համար: Այս առթիւ ցաւով կուզամ նշելու թէ նորէն եկեղեցւոյ կնքահօր հարցը կնճռու-տեցաւ որովհետեւ որպէս թէ Տիկ. Տէմիրճեան տօթթօրին խոստացեր է որ եկեղեցիին անուանը Ս. Գրիգոր նաթիկացի պիտի մնայ ինչպէս որ տօթթօրը կուզէր եւ երբ տօթթօրը տեղեկացաւ որ անուանը Ս. Կարապետ պիտի դրուի, բարկացաւ եւ նորէն իր պահանջքի վրայ պնդեց, երբ Տէմիրճեաններուն այս հարցի ^{հարցի} իմացուցինք մեզի գրեցին որ քանի այդպէս է մենք մեր փափաքէն ետ կը կենանք, եւ ան-շուշտ 3400 տուար աւելի գումար մը պիտի տային եւ այս ձեւով 100 տուար տօթթօրին տուածէն աւելի, այս գումարը չեն տար: Իսկ եթէ իրենց ուզած անուանը պիտի դրուի այն ատեն իրենք կնքահայր պիտի ըլլան: Ինծի այնպէս կը թուի թէ Երկու օր վերջ գումարուելիք ժողովին նորէն պիտի ուղղուի որ տօթթօրը թէ ըլլայ կնքահայր: նորէն կը գրեմ այս ուղղութեամբ:

Ամենէն կարեւորը այն է որ երկու անգամ, հոկտեմբերին եւ Յունուարին, ձեզի նամակ գրուած էր որ վեհափառէն խնդրուի որ մեզի օրհնութեան գիր մը ղրկէ, դժբախտաբար որեւէ գիր չստացանք մեր Օծման գրքոյկին մէջ հրատարակելու համար, եւ երկու օր առաջ Սահակ Արք. Թեմ կողմէ գրուած նամակէն իմացայ որ այդ ուղղութեամբ որեթէ գիր չէ ղրկուած եւ եթէ ղրկուի, անշուշտ Առաջնորդա-րանի կողմէ, վեհափառը սիրով պիտի ղրկէ օրհնութեան գիր մը: Ձեմ գիտեր Առաջնորդարանէն այդպիսի գիր մը ղրկուեցա՞ւ թէ ոչ: Այս աստիճանին հասնելէ վերջ պիտի խնդրէի որ նորէն վեհափառին գրուի Առաջնորդարանի կողմէ եւ խնդրուի որ վերոյիշեալ օրհնութեան գիրը ղրկուի որպէսզի օծման օրը եկե-

Armenian Church of Cleveland

666 Richmond Road * Cleveland, Ohio 44124 * 381-6590

Ղեցւոյ բեմէն, ձեր քարոզէն առաջ, կարգացուի:

Եղիշէ հայրսուրբին ալ օծման օրուայ համար հրաւեր Ղրկուած էր բայց մինչեւ հիմա տակաւին պատասխանած չէ, իրեն կրնա՞յիք յիշեցնել:

Ստացած եմ նաեւ թեմիս սահմանադրութեան բարեփոխեալ առաջարկուելիք գրուած թիւնը որուն մէջ որոշ սխալ կէտեր կան եւ որոնց մասին ամսագրուիսէն առաջ կը գրեմ:

Զայսոսիկ հաղորդելով ձերդ Սրբազնութեան մնամ ձեր Ս.Ա.Նը համբուրող,

Որդիական սիրով,



Վազգէն Մ. Վրդ. Գրպրըսլեան,
Հոգեւոր հովիւ Գլխավէնտի հայոց:



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Քի: 11129
Մարտ 17, 1964

Հոգեշնորհ
Տ. Վազգեն Ս. Վրդ. Գրգորյան
Հոգևոր Հովիտ Գլխավոր Հայոց
Գլխավոր.

Սիրելի Հայր Վազգեն,

Ասացած ենք Ձեր Մարտ 14 թուակիրը, որով կը հաղորդեք թէ
եկեղեցւոյ օժման կնքակոր եւ անուան հարցը կարելի չէ եղած կար-
գազրել տակաւին: Կը յուսանք թէ մինչեւ օժման օրը՝ վերջնական
կարգադրութիւն կ'ըլլայ սիրով եւ համաձայնութեամբ:

Գալով Վեհափառ Հայրապետին օրհնութեան գիր ուղղելու
խնդրոյն, առիկա մեր կողմէն կարգադրուած է: Այսպիսի խնդիրները
Առաջնորդէն միայն կը կատարուին: Ձեր ծուլիւն գետն չէ գրուել
Ս. Եղմիածին: Վեհափառ գիրը եկեղեցւոյ օժման օրը կը կարդացուի:

Տիրաւանդ սիրոյ ողջունի
Աղօթարար

ՍՈՌՆ ԱՐՁԵՐՈՍԿՈՐՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 15279
Դեկտեմբեր 2, 1966

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Մ. Վրգ. Գրգրըսլեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Գլխակէնս:

Սիրելի Հայր Վազգէն,

1966 Օգոստոս 24ին Առաջնորդի պաշտօն մեր ստանձնելէն ի վեր, մէկ կողմէ կը շանանք բաւարարել մեր թեմի Համայնքները այցելութիւններով եւ թղթակցութիւններով, միւս կողմէ կը տեսնենք մեծ կարիքը Առաջնորդարանի մէջ գրասենեկները, որոնք կարգաւորման եւ պակասը մեր ընդարձակ թեմին կարիքներուն Համապատասխան գործող անձներուն:

Կարգ մը ուրիշ կարգադրութիւններ ընել շանալէ յետոյ, եկած ենք այն Համոզման որ մեր թեմին ընդհանուր բարգաւաճման սիրոյն անհրաժեշտ է որ դուք փոխադրուիք Նիւ Եորք, Առաջնորդարանի մէջ ստանձնելու Համար Առաջնորդի Փոխանորդի պատասխանատու պաշտօնը:

Ուստի, կը թելադրենք որ մինչեւ 1967 Յունուար 9 Միական Խորհուրդի Հետ կատարէք անհրաժեշտ կարգադրութիւնները, Համայնքիդ անդամներուն Հաղորդելով առյն որոշումը եւ փոխադրուելով Նիւ Եորք: Գլխակէնսի մեր Համայնքին Հոգեւոր կարիքը մտակարարելու Համար կը յուսանք պատշաճ կարգադրութիւն մը ընել Ձեր եւ Միական Խորհուրդի Հետ խորհրդակցաբար:

Կը մազթենք որ զօրանաք Սուրբ Հոգիով եւ Ձեր ծառայութիւնը Հայր-Եկեղեցւոյ եւ մեր բազմակարիք թեմին մէջ լինի արդիւնաւոր, ի փառս Աստուծոյ եւ ի մխիթարութիւն մեր ժողովրդեան:

Սիրոյ ողջունիլ
եւ օրհնութեամբ

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քր. 15278
Դեկտեմբեր 2, 1966

Հոգեշնորհ
Տ. Վազգեն Մ. Վարդապետ Գրգրբազան
Հոգեւոր Հովիտ Ա. Գրիգոր Նարեկացի Սկեզեցւոյ
եւ Նախագահ Միակամ Խորհուրդի
Գլխակէնտ.

Սիրելի Հայր Վազգեն.

Այսու կը յայտնենք Ձեզ թէ Առաջնորդի պաշտօնը մեր ստանձնելի ի վեր կը շահանք բաւարարել մեր ընդարձակ թեմի կարիքները եւ սակայն չենք յաշուած Մեծ է կարիքը Առաջնորդարանի մէջ գրասենեակներու գործերու կարգաւորման, նաեւ զգալի է պակասը այդ կարիքներուն համապատասխան գործող անձներուն:

Անհրաժեշտօրէն պէտք ունինք կորովի եւ պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցող Առաջնորդի Փոխանորդի մը հանշեակով Ձեր անկը. Ձեր նուիրումը եւ Գլխակէնտի մեր համայնքին մէջ կատարած Ձեր բարի գործը, ժամանակ մը վարանեցանք Ձեր անդափոխութեան մասին մտածելու: Ասկայն, կարգ մը ուրիշ կարգադրութիւններ ընել շահալի յետոյ, անհրաժեշտ կը զանենք որ զուտ փոխադրուիք Նի Եորթ. Առաջնորդարանի մէջ ստանձնելու համար Առաջնորդի Փոխանորդի պատասխանատու պաշտօնը:

Հասակ ենք թէ Միակամ Խորհուրդը եւ համայնքի անդամները Ձեր անկին հանդէպ իրենց ունեցած սիրոյն եւ համակրանք իրրել հետեւանք պիտի խոզկին իրենց սիրամբուն մէջ, եւ սակայն յուսով ենք որ նոյն ասան պիտի ըմբռնեն Ձեր ունեցուն վրայ գրուած պատասխանատուութեան կարեւորութիւնը մեր թեմին ընդհանուր բարգաւաճման անսակէտէն:

Ուստի, կը հրահանգենք որ մինչեւ 1967 Յունուար 9 Միակամ Խորհուրդի հետ կատարել անհրաժեշտ կարգադրութիւնները համայնքի անդամներուն հազարգիւտ սոյն որոշումը եւ փոխադրուիք Նի Եորթ. Գլխակէնտի մեր համայնքին Հոգեւոր կարիքը մտաւարարելու համար կը յուսանք պաշտան կարգադրութիւն մը ընել Ձեր եւ Միակամ Խորհուրդի հետ խորհրդակցարար:

Կը մաղթենք որ Սուրբ Հոգւոյն շնորհները անպակաս մնան Գլխակէնտի Ա. Գրիգոր Նարեկացի Հայաստանեայց Սկեզեցւոյ մեր համայնքին բոլոր անդամներուն վրայէն, եւ Ձեր Եռադասութիւնը մեր բազմակարիք թեմին մէջ լինի արդիւնատու, ի փաստ Աստուծոյ եւ ի միխթարութիւն մեր ժողովրդեան:


Սիրոյ ողջունելի եւ օրհնութեամբ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՑՈՍ
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավէնտ, Օհայօ



Area Code 216—Tel. 381-6590

ST. GREGORY OF NAREK
ARMENIAN APOST. CHURCH

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

Հովիւ Կ. Արքեպիսկոպոս Գրիգոր Նարեկացի

PASTOR-REV. Կ. ԱՐԽԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

REV. FR. DIRAN PAPAŽIAN

Արժ. Տ. Տիրան Ահնայ. փափագեան
(կամ ալ առանց Արժանապատիւի առջեւը)
Տ. Տիրան Ահնայ. փափագեան

16 Մարտ, 1973

Սիրելի Սուրբն,

Հետեւեալը պատիկ խնդրանք մըն է, որուն եթէ Առաջնորդարանին կողմէ ընթացք տալու ըլլաս շատ գոհ կը մնամ: Առաջնորդարանը որ տպագրական բազում գործերու յորձանուտին մէջ է (թէ Հայերէն եւ թէ Անգլերէն), արդեօք կը խորհիս թէ ծառայութիւն մը կընեն եկեղեցւոյս մեր նամակագրուիւնները պատրաստելով: Անշուշտ աւելորդ է ըսել որ ծախքը կը հոգանք: Ներփակած եմ զոյգ մը թուղթ մեր հին նամակագրուիւններէն ~~պարզ~~ ի հարկին գործածելու համար զանոնք: Անոնց վրայէն անուններն են միայն որ պիտի փոխուին, ըստ մատնանշուածին ՚Իսկ մնացեալները նոյնութեամբ պիտի պահուին, այսինքն եկեղեցւոյ պատկերը, Հեռախօսի թիւերը եւ եկեղեցւոյ անունն ու հասցէն եթէ կ'ըզոյնեն: Հոստեղի դժուարութիւնը Հայերէն տառերու չգոյնութեան հարցն է, այլապէս տեղւոյս վրայ կրնայի պատրաստել տալ: Այն պարագային որ այս տպագրական դոյզն ծառայութիւնը մատուցանելու յօժար են, պէտք ունինք 1000 հատ մը "սթէնտըրտ սայզ" ով եւ 1000 հատ մըն ալ "սթէնտըրտ" ին կէս մեծութեամբ կարճ ու թերու կամ նամակներու համար: Այս մասին կրնամ լսել քեզմէ շուտով:

Յաջողութիւններ եւ առողջութիւն:

Սիրալիը զգացումներով,

Diran Papazian
Տ.Տիրան Երէց

Յ.Գ.— Անշուշտ որակաւոր թուղթ պէտք է գործածել եւ անուններու տառերն ալ ճաշակաւոր ըլլալու են:

Diran
նոյն

Մարտ 22, 1973

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԶԳՆՅ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Գլխավէնտ.

Սիրելի Տէր Հայր,

Մարտ 16 թուակիր Ձեր նամակը ստացայ երկու օր առաջ եւ Ձեր պատուէրը փութով կատարելով՝ նամակաթուղթի տպագրութեան գործը յանձնեցին տպագրիչին, խնդրելով երկու օրինակ բերէ մէկ քանի օրէն, երկու տարբեր տառերով շարուած: Երբ ստանամ, իսկոյն Ձեզի կը դրկեմ որպէսզի նախընտրութիւն ընէք:

Ինչպէս գիտէք Ձեր տուած նամակաթուղթին վերը դրուած եկեղեցիին պատկերը աղօտ է արդէն, եւ անկէ քլիշէ շինելը այնքան ալ յանձնարարելի չէ: Հետեւաբար իմ թելադրութիւնս է որ նոր պատկեր մը դրկէք, տալով շինուելիք կաղապարին չափը:

Հազար օրինակը պիտի ըլլայ Ձեր տուած նամակաթուղթին չափով, միւսին որ պիտի գործածէք "Նօթերու կամ նամակներու համար" արդեօք պիտի ուզէիք որ ըլլար ներփակուած թուղթին չափով, թէ ոչ սովորական թուղթի վարի մասէն չորս-հինգ մասնաչ կտրելով:

Կայ նաեւ ուրիշ կէտ մը: Թեմական Խորհուրդը վերջին ժողովին մէջ որոշեց յանձնարարել թեմի համայնքներուն որպէս զի իրենց նամակաթուղթին ներքեւ գետեղեն Առաջնորդարանի խորհրդանշանը եւ անոր ներքեւ մէկ տողի վրայ տպեն հետեւեալը՝ **Seventy-Fifth Anniversary--1898-1973**. Ձեմ գիտեր թէ Խորհուրդը մտածած էր որ այստեսակ մակագրուած նամակաթուղթ մը կարելի է գործածել միայն մէկ տարի, որուն երեք ամիսը արդէն պատմութեան անցած է: Այս մասին որոշումը տալը Ձեզի թողով, կը մաղթեմ Ձեզի եւ ընտանիքի անդամներուն ողջութիւն եւ ուրախութիւն:

Խոնարհ Յարգանծք

Սուրէն Մանուէլեան

Քիւ 24800
Մարտ 21, 1974

Արժանաշնորհ
Տ. Տիրան Բհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի
Հայաստանեայց Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գլխավէնտ, Օհայօ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Փետր. 19, 1974 թուակիր ձեր նամակը: Ինչ-
պէս որ հեռաձայնային մեր խօսակցութեան ընթացքին ըսած էինք՝
ընդառաջելով Ժիական Խորհուրդիդ փափաքին Եկեղեցւոյդ ուրարա-
կիր Տորթ. Գեղամ Կէօքմեանի կիսասարկաւազի ձեռնադրութիւնը
կրնանք կատարել Ապրիլ 21ին: Սակայն սարկաւազի ձեռնադրու-
թիւնը պարտինք յետաձգել: Նախ պէտք է տեսակցինք ենթականե-
րուն եւ ձեզի հետ:

Այս առթիւ կը փափաքինք տեղեկացնել թէ Գլխավէնտէն մեր
վերադարձը յերաձգած ենք Երկուշաբթի Ապրիլ 22ի կէսօրուան:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխվկէնտ, Օհայօ



ST. GREGORY OF NAREK

ARMENIAN CHURCH

REV. FR. DIRAN PAPAŽIAN
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

19 Փետրուար, 1974

Բարձրաշնորհ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Որ ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Առաջնորդ Արքայան Հայր,

Այսու Միակեան Խորհուրդիս մէկ փափաքը եւ որոշումը կը փոխանցեմ Ձերդ Արքայանութեան, ըստ որում կ'ազգուի որ Եկեղեցւոյս Տասնամեակի մօտալուտ հանդիսութեանց ուրախ առիթով, Յարկաւազական աստիճանի բարձրացում շնորհէք մեր այժմու Ս. Սեղանի սպասարկութեան մէջ եղող զոյգ տարեց Տիրացուներուն, որոնց անուներն են Տթթ. Գեղամ Կէօքճեան եւ Տիրար Կարպիս Պալտըրեան: Այս մասին, արդէն առիթով մը, գիտէք որ արտայայտուած էի Ձեզի, եւ դուք, որքան որ կըրցայ հասկնալ, անպատեհութիւն մը չէիք տեսած մեր տօնակատարութեան օրը նման շնորհաբաշխութիւն մը կատարելու: Սոյն ընծայացուներուն այժմեան ունեցած աստիճանները, ըստ պրպտումներուս եւ ըրած հարցումներուս, կը ներկայանան ըստ հետեւեալին, Գ. Կէօքճեան ուրարակիր է, իսկ Կ. Պալտըրեան կ'իսասարկաւազ:

Արտայայտուած փափաքը այն է որ՝ երկուքին ալ շնորհուի Աւագ Սարկաւազութիւն, հաւասարապատիւ ըլլալու համար: Եթէ այս յարմար չի տեսնուիր ինչ ու ինչ պատճառներով, այդ պարագային կը խնդրուի որ, միայն շնորհէք կ'իսասարկաւազութիւն, այն որ ուրարակիր է, իսկ միւսին աւագ սարկաւազութիւն, այն որ կ'իսասարկաւազ է: Իսկ եթէ այս եւս անյարմար կը դատուի ձեր կողմէ զանազան պատճառներով, այդ պարագային մենք ներկայիս կը բաւականանք եթէ մեր այժմու ուրարակիրին՝ Գ. Կէօքճեանի շնորհէք կ'իսասարկաւազի աստիճան, զինք հասցնելով նոյն աստիճանին որ ունի իր ընկերակիցը, իսկ Աւագ Սարկաւազութեան շնորհաբաշխութիւնը երկուքին եւս՝ կարելի է յետաձգել ապագային, ուրիշ յարմար առիթի մը, որ արդէն չի պակսիր: Այս վերոյիշեալ ծրագիրներէն որեւէ մին ընդունելի է մեզ համար:

Ընծայացուներուն արժանաւորութեան մասին մեր անձնական բարեխօսութեան կարիքը չի կայ, տրուած ըլլալով որ զանոնք անձամբ ճանչնալու պատեհութիւնը դուք ունեցած էք, եւ գիտէք թէ որքան անձնուրացօրէն եւ հաւատարմօրէն անոնք ծառայած են եւ կը շարունակեն ծառայել Գլխվկէնտի Հայ Առաքելական համայնքին, տարիներով ու տարիներով, եկեղեցին շինուելէ առաջ եւ վերջ:

Այն պարագային որ դուք համաձայն գտնուիք մեր փափաքին գոհացում տալու մէկ կամ միւս ձեւով, պիտի խնդրէի ձեզմէ որ ձեռնադրութեան մէկ կարգացոյցը բարեհաճէիք ղրկել մեզ, որպէս զի մենք ալ մեր կարգին կարենայինք մասնակցելու արարողութեանց գիտակցօրէն եւ անվարան:

Համբարիւ Ձեր Ս. Աշոյն,
Խոնարհ Աղօթարար
Մարտին Գրիգորյան
Տ. Տիրան ԹՀՆԵ. Փափազեան, Հովիւ

Թիւ 24224
Փետր. 1, 1974

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՆՆյ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլխիւէնս.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Յունուար 25, 1974 թուակիր ձեր նամակը՝
Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ օժման 10-ամեակին առ-
թիւ Վեհափառ Հայրապետէն Օրհնութեան Գիր մը խնդրելու առըն-
չութեամբ:

Այս առթիւ կը փափաքինք տեղեկացնել թէ եկեղեցւոյ օժ-
ման տարեդարձի առթիւ Օրհնութեան Գիր խնդրելու փոխարէն պէտք
է յարմար առիթով Ամենայն Հայոց Հայրապետէն Օրհնութեան Կոն-
դակ խնդրել: Եւ այդ ալ յատկանշական եւ բացառիկ առիթներով
միայն կրնանք խնդրել իրմէ:

Կը յուսանք որ նման առիթ մը կը ստեղծուի ապագային
Գլխիւէնսի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ համար եւս:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխվկէնտ, Օհայօ



ST. GREGORY OF NAZIANZEN
ARMENIAN CHURCH

REV. FR. DIRAN PAPIAZIAN
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

25 ԶՈՒՆՈՒԱՐ, 74

Գեր. Ս. Թոթգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
ի նիւ ետրկ, Ն.Ե.,

Սիրելի Առաջնորդ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյ Տասնամեակին հանդիսութեանց առնչութեամբ, Ծխական Խորհուրդի ժողովներուն մէջ, այս հարցին ծրագրի մշակման խորհրդակցութեանց ընթացքին, քանիցս փափաք յայտնուեցաւ որ Օրհնութեան Գիր մը բերուի Ազգիս Վեհափառ Հայրապետէն:

Բնականաբար կրնաք կռահել որ ես բացատրեցի ժողովականներուն որ փոքրիկ եկեղեցիի մը Տասնամեակը, ինչպիսին է Գլխվկէնտի Ս. Գրիգոր Նարեկացին, բաւարար առիթ մը չէ Վեհափառ Հայրապետին անդորրութիւնը խանգարելու: Սակայն կերեւի բացատրութիւնս պէտք եղած տպաւորութիւնը չի գործեց, անոր համար թերեւս որ, իրենք կը խորհին թէ Վեհափառը իր արտին շատ մօտ պէտք է զգայ Գլխվկէնտի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին, իբրեւ միակը բովանդակ Օհայո նահանգին մէջ, երբ իր առաջին այցելութեան առթիւ, 1960-ին, իր արտայայտած զգացումներուն եւ քաջակցութեան շնորհիւ կարելի եղած է փութացնել եկեղեցաշինական գործունէութիւնը: Եւ պնդուեցաւ որ հետամուտ ըլլամ իրենց խնդրանքը մատուցանելու հոն ուր որ անկ է:

Ես ալ ուրեմն իմ կարգիս, ըստ պատշաճութեան սոյն խնդրանքը կը բերեմ Ձերդ Սրբազնութեան բարձր ուշադրութեան հորպէս զի դուք ալ համաձայն ձեր դատողութեան ընէք պատշաճը:

Համբուրիւ Ձեր Ս. Աշոյն,
Խոնարհ Ազօթակից,

Տ. Տիրան Զհնյ. Փափազեան,
Հովիւ

Յուլիս 4, 1976

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲԳՆՅ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Մարեկացի Սկեղեցւոյ
Գլխավէնա.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Մայիս 27 թուակիր 2եր նամակը:

1. Մեր աշակերտները ներկայիս արձակուրդի մէջ ըլլալով արամազրե-
լի մէկը չունինք ամ: Եթէ կարգադրել կարելի ըլլայ, ձեզի ա-
տենին կ'իմացնենք:
2. Տ. Մամբրէ ԲԳՆՅ. Գուգուեան 2եզի պիտի դրկէ քթուակ մը, ուրկէ
կրնաք Սկիհի համար 2եր ընտրութիւնը կատարել:
3. Մենք Յուլիս 9ին Գլխավէնա կը ժամանենք Եունայթեա 808 թոխըով
եւ ժամը 5.50ին: Նիւ Եորք պիտի վերադառնանք Յուլիս 12ին:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳՈՍԵՈՂՈՍ
Առաջնորդ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավէնտ, Օհայօ



ST. GREGORY OF NAREK

ARMENIAN CHURCH

REV. FR. DIRAN PAPIAZIAN
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143. U.S.A.

27 Մայիս, 1976

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Թեմին Ամերիկայի,
ի Նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Սրբազան,

Ձեր պաշտօնական այցելութեան թուականը ծուխիս, Յուլիս 10-11, 1976
կը մօտենայ արագաքայլ, մեր սպասումն ալ դարձնելով աւելի ու աւելի
անձկագին:

Սոյն երկտողով պիտի փափաքէինք ձեզմէ խնդրել, եթէ առարկութիւն մը
չունիք, որ կատարէիք ընծայումը (օրհնութիւն եւ օծում) յատկապէս պատ-
րաստուած եւ Հայկական ոճով շինուած խորանի խաչի մը որ նուիրուած է
եկեղեցւոյս, մեր բարեպաշտներէն Հրայր եւ Նորայր Օհանեան Եղբարց եւ
իրենց ընտանեաց կողմէ, ի յիշատակ իրենց հանգուցեալ հօր Վարդան Օհան-
եանի որ տարի մը առաջ ի Տէր հանգեալ Պարսկաստանի մէջ:

Նմանապէս սոյն երկտողով կ'ուզէինք հետեւեալ պարագան ալ աւելցնել:
Նկատելով որ մենք փոքրիկ ծուխ մըն ենք եւ զուրկ ենք յաւելեալ ուժերէ
եւ միջոցներէ, կը խորհիմ որ օգտակար պիտի ըլլար մեզ համար, եթէ ան-
շուշտ հնաւորութիւնը կայ, ունենալ մեզի հետ Ս. Ներսէս Աստուածաբանա-
նական ճեմարանի ուսանողներէն մին որ իբրեւ սարկաւազ ճանապարհորդակից
ըլլար ձեզի, եւ հոս գալով իր մասնակցութիւնը բերէր օրուան եկեղեցական
արարողութեանց եւ հանդիսութեանց, ինչ որ վստահաբար պիտի աւելցնէր փայլը
օրուան: Գրեթէ մեծամասնութեամբ բախտաւոր են մեր ծուխերը ըլլալով իրա-
րու մերձաւորութեանը մէջ եւ այդպէսով կարելիութիւնը ունենալով օգտը-
ւելու իրարու ուժերէն: Մենք զրկուած ենք այդ բախտէն բոլորովին կողմ-
ացած ըլլալով, եւ հետեւաբար օգտակար է նոր դէմքերու երբեմնակի ներկա-
յութիւնը ծուխէս ներս: Հնաւորութեան պարագային կ'սպասենք կանխապէս լուր
ունենալ պարտն ու պատշաճը տնօրինելու համար:

Բանի սոյն երկտողը կը գրուի, օգտուելով պատեհութենէն, կ'ուզեմ սա
հետեւեալ խնդրանքը եւս մատուցանել որ սակայն կապ մը չունի ձեր այցե-
լութեան հետ: Սկիհ մը ապահովելու համար, ի պէտս մեր եկեղեցւոյ գոր-
ծածութեան, (մօտաւորապէս 500 տալար արժողութեամբ), ուր կարելի է դիմել
եւ ինչ քայլեր կարելի է առնել, այս մասին եթէ գաղափար մը տալու ըլլաք
ձեր փորձառութեան վրայ հիմնուած, շատ գոհ կը թողուք մեզ:

Համբուրիւ ձեր Աշոյն,
Խոնարհաբար,
Աղօթակից,
Միւրապետեան
Տ. Տիրան Բհնյ. Փափագեան, Հովիւ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

Երթանաշնորհ
Տ. Տիրան ԲՅՆՅ. Նախագահ
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Ոկեղեցւոյ
Նախագահ Ժառան Խորհուրդի
Գլխավորնա.

Սիրելի Տէր Տիրան,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տար-
լան Օգոստոսին: Ետըջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղե-
ցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն շննքերուն եւ իրագոր-
ծումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային
Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին
վրայ:

Հուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ
աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ
բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու
իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն
ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ
վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան,
յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

Տիրա Տատուր Տատուրեան
Տիրա Սուրէն Ֆէսմեան
Տիրա Եղուարդ Պաշեան
Տ. Գառնիկ ԲՅՆՅ. Հալլաճեան
Տ. Աննակ ԷՅՆՅ. Գասպարեան
Տիրա Եիչըրտ Գ. Կրէկըրի

Ատենապետ
Գանձապահ
Բ. Գանձապահ
Բարտուղար
Բ. Բարտուղար
Օրինական Խորհրդատու

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կար-
գացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մին-
չեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախուժման նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ զտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրճեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախուժք մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախուժքի անդամներուն անունները համեմատել մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատողի ճաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախուժքին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեմատել զտնել 40 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ծանցուած Հայկ Գավուրճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ

Առաջնորդ